

Wright's Zierophthalma

12142

~~Wright's~~ Zierophthalma

891.99

Z-42

1908

32

MD

2003

891.99 -
L-42

Դ Ա Ս Տ Ա Ն

ԵԿԱՏԵՐԻՆԵՆՁԷԼԴՈՒՄ ՍՊԱՆՎԱԾ ԲԱՇՄԱՔՉԻ ԱՐՇԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

1. Հազար իննը հարիւր և եօթն թւին Սեպտեմբերի տասերկուսին էր այս բան. Գիշերվա ժամի երեքի կէսին Կալօնից Շուլավեր ճանապարհ ընկան:

2. Կալօնում ընակող Ստեփան և Արշակ, Յորեն բերելու գիշեր ժամանակ, Երկու ֆուրգօնն առաջ, իսկ միւսն քամակ, Իւրեանց ֆուրգօնի առաջ զնացող մարդ տեսան:

3. Տեսէք, չար թշնամին գշերն էր անքուն, Մինչև որանց գնալը մնացել էր զարթուն, Երբ տեսաւ Արշակը նստում էր ֆուրգօն, Նա ֆուրգօնի առաջ ընկաւ շան նման:

4. Կարծես սիրտն իմացաւ խեղճը մտածեց, Իւր կողքին նստած ընկերին հարցրեց. Այս վախարին ուր է գնում, սա ով է Ստեփան:

5. Ստեփանը չը դարձրեց ուշադրութիւնը, Ասաւ ճանապարհորդ է գնում է իւր տունը. Երբ գիւղից դուրս գնացին, այն սոված շունը Յանկարծ որտեղ նանգաւ, չը տեսան նորան:

6. Գիւղից դուրս թշնամին մի տեղ թագ կացաւ, Մնալով մինչի նրանց ֆուրգօնն անցաւ, Յանկարծ քամակից ատրճանակ բացաւ, Արշակին ձախ թևում բռնել էր նշան:

7. Թշնամին գնդակը քամակից զարկեց. Արշակը վայր իջաւ ընկերին ասեց, Ասաւ. օգնիր Ստեփան, վայ կուռքս կտորվեց, Նոյն բողբոջին հոգին տուաւ, մօտեցաւ վախճան:



8. Նա տեղից չըջարժվեց կանգնած էր անտախ, Ատրճանակ ձեռին նայում աջ ու ձախ Երբ տեսաւ հոգին տուաւ, յետ դարձաւ ուրախ, Իւրան խրատողներին տուեց այցելութիւն:

9. Բոլոր ֆուրգօնները շուտով յետ տարան, Կենդանի մարդ գնաց սպանված բերան, Բոլորին յայտնի է այս բանն ով արտաբայց ոչ որ չի ուզում տալ վկայութիւն:

10. Երբ որ տուն բերին սպանված դիակը Ընտանեաց սրտին վառվեց կրակը, Հինգ երեխան ոկսեց լաց աղաղակը, Երևակայեցէք ինչ կլինէր այն տեսարան:

11. Ժողովեցան նեմենց, հայ և թուրքերը, Աչքերից թափեցին արտասուները. Ուրախացան Կալօնկի վատ հայերը *), Տեսէք նորանց սրտի խորամանկութեան:

12. Թագման օրը չորս կողմերից լցվեցին, Սպանված դիակը դազաղով վերցրին. Պատուով տարան սև հողին պահ տվեցին, Ողորմի ասեցին ամենք մի բերան:

13. Ափսոս աշխարհիցը շուտով բաժանվեց. Մէկ անպիտան մարդու ձեռովը սպանվեց. Կալօնում այնպիսի չար հողիք ծնվեց, Ոչ աղու հաց կը ճանչնան, ոչ բարեկամութիւն:

14. Նախանձութեամբ աջ գործն առաջ չըթողին, Այսպէս շուտով յանձնեցին սև հողին. Կողմնապահ են աւազակի և գողի, Ազգի խայտառակիչ, թուր նրանց մարդկութեան:

15. Տանն և չորս տարվայ կարգված Արշակը, Փոքր երեխէքով լցված Արշակը. Այժմ հողի մէջն է պարկած Արշակը, Բարձրանասակ քառասուն մէկ տարեկան:

16. Նա գնաց իւրան ճանապարհին, ետ չի գայ, Տխուր թողաց կին և ինք փոքր երեխայ, Եթէ յանցաւորին պատիժ էլ չըկայ, Ուրեմն չկայ Աստուած, չկայ դատաստան:

17. Աղ ու հաց կուտէին, սրտով էին ներհակ, Խեղճ անմեղին իզուր արին նահատակ. Գուրգար-Օղլին նրա համար յիշատակ, Մտածեց հնարեց ցաւալի գաստան:

*) Այն վատ հայերը ուրախացան, որոնք մասնակից էին այս չարագործութեան մէջ:

ՈՒՐԳԱՐ-ՕՂԻ ԱՐՏԷՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ



46394-աի

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ս. Պ. Եգիզարեանի Թիֆլիս, 1908 թ.

17408-58

(2)

12142

57

2013

